ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**«---» հոկտեմբերի** 2013թ. **N__-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

**«Ա. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔԵՐ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքերը՝ համաձայն հավելվածի, անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Ա.Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ կազմակերպություն)։
2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում կազմակերպության հետ կնքել անհատույց օգտագործման պայմանագիր՝ դրանում սահմանելով, որ պայմանագրի նոտարական վավերացման և դրանից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարվում են կազմակերպության միջոցների հաշվին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2013 թվականի հոկտեմբերի -ի
հ.__-Ա որոշման

# Ց Ա Ն Կ

## «Ա. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող գույքերի

| հ/հ | Գտնվելու վայրը | անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականի համարը, տրման ամսաթիվը |
|---|---|---|
| 1. | Նալբանդյան փողոց 4/1 տարածք | 11062013-01-0208<br>11.06.2013թ |
| 2. | Կիևյան փողոց 3 շենք, 52 ոչ բն. տարածք | 08062013-21-0023<br>08.06.2013թ |
| 3. | Էրեբունի փողոց 32 շենք, 91 շինություն | 11062013-01-0016<br>11.06.2013թ |
| 4. | Մամիկոնյանց փողոց 21 շենք, 47 շինություն | 18062013-01-0156<br>18.06.2013թ |
| 5. | Կոմիտասի պողոտա 6 շենք, 17 տարածք | 18062013-01-0206<br>18.06.2013թ |
| 6. | Կիևյան փողոցի 1 բնակելի տուն, 58 շինություն | 18062013-01-0058<br>18.06.2013թ |
| 7. | Զարյան փողոց 19 շենք, 65 ոչ բն. տարածք | 18062013-01-0122<br>18.06.2013թ |
| 8. | Բաղրամյան պողոտա 20 շենք, 5 շինություն | 08012013-01-1804<br>08.01.2013թ |
| 9. | Աթոյան անցուղի 9 շենք | 1430791<br>06.04.2004թ |
| 10. | Սայաթ Նովա 37 շենք | 1194848<br>26.11.2004թ |
| 11. | Տիգրան Մեծի պողոտ 30 շենք, 1-ին հարկ | 1493562<br>22.04.2005թ |

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

# ««Ա. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔԵՐ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ա. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» ՊՈԱԿ-ը ստեղծվել է ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 2142-Ն որոշմամբ, որով կազմակերպության կառավարման լիազորությունները վերապահվել են Երևանի քաղաքապետին:

«Ա. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» ՊՈԱԿ-ն ունի 13 մասնաճյուղ (այսուհետ՝ գրադարան):

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 110-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան ՀՀ կառավարության 29.05.2009թ. N 604-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանվել է հետևյալը.

«Երևանի ավագանու առաջին ընտրությունից հետո սեփականության իրավունքով անհատույց Երևան քաղաքին համարել փոխանցված (հանձնված)՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպությունների հիմնադրի լիազորությունները և դրանց ամրացված գույքը, այդ թվում՝ անշարժ գույքի համար առանձնացված հողամասերը՝ համաձայն N 1 հավելվածի»:

ՀՀ կառավարության 29.05.2009թ. N 604-Ն որոշման 3-րդ կետի համաձայն որոշման N 1 հավելվածով սահմանված պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերակազմավորման ձևով վերակազմակերպվել են համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների: Նշված N1 հավելվածի 27-րդ կետում ընդգրկված է նաև «Ա. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» ՊՈԱԿ-ը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29.05.2009թ. N604-Ն որոշումը՝ Երևանի քաղաքային համայնքը ձեռնամուխ է եղել իրեն անհատույց սեփականության իրավունքով փոխանցված (հանձնված) գրադարանի գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման աշխատանքների իրականացմանը:

Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ հիմնադիրը կարող է պետական կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

Նշված գործընթացն ապահովելու նպատակով ներկայացվում է ««Ա. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ

## ««Ա.ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔԵՐ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքերը «Ա. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## ««Ա.ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔԵՐ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքերը «Ա. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին» որոշման ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ